№ 47 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 5

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 5 № 47

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 րուբ., 11 ամս. 10 ր., 10 ամս. 9 ր., 9 ամս. 8 ր., 7 և 6 ամս. 6 ր., 5 ամս. 5 ր., 4 ամս. 4 ր., 3 ամս. 3 ր., 2 ամս. 2 ր., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.: Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 րուբլի, Թիւրքիա 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Փարիզում՝ 8 Площадь Биржи.

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

Սայլապանների աւագի և նրա կանդիդատի յետաձգված ընտրութիւնը նշանակելով ներկայ մարտի 8-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, խնդրում է բոլոր սայլատէրերին, որոնք 1909 թ. համար վերցրած ունեն իրաւունք, ներկայ լինել նշանակված օրը և ժամին Քաղաքային Վարչութեան շէնութեան մէջ՝ կատարելու վերոյիշեալ ընտրութիւնները:

(հ) 189. 1—1

ՅՈՒԶԻՉ ԼՈՒՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Այն ժամանակ, երբ մենք յորդորներ ենք կարդում Թիւրքահայ պանդուխտներին վերադառնալ իրանց ծննդավայրերը և այնտեղ զբաղվել իրանց հողագործութեամբ և տնտեսութեամբ, մեզ տեղեկութիւններ են հասնում, թէ Թիւրքահայաստանի զանազան մասերում լուրեր տարածողներ կան, որ իբր թէ այնտեղ սպասվում են անկարգութիւններ և նոյնիսկ կոտորածներ:

Դա ցաւալի և շատ ցաւալի մի երևոյթ է:

Այդպիսի լուրեր տարածելը մի յանցանք է այն ժողովրդի դիմաց, որը տասնեակ տարիներ զրկված իր օջախից, սպասում է իր վերահաստատմանը մայր հողի վրա և իր տնտեսութեան վերանորոգմանը:

Այժմ, երբ պանդուխտ ժողովուրդը կարող է տէր դառնալ իր հողերին և վերականգնել իր տնտեսութիւնը, այժմ, երբ Թիւրքահայը, վերահաստատվելով իր հողի վրա, կը սկսի իրագործել իր քաղաքացիական և տնտեսական իրաւունքները իր ծննդավայրում, մի ինչ-որ չար ոյժ կամ մի թիւրիմացութիւն և կամ վերջապէս մի թեթևամիտ աղմկաբանութիւն գալիս է խանգարելու ժողովրդի վերադարձը դէպի իր տունը և նորից քշելու շատերին մայր հողից դէպի հեռուները:

Յուզիչ լուրեր, երկիւղների ուրուականներ ասպարէզ գցելը մեծ վնասներ կը պատճառի Թիւրքահայաստանի ժողովրդին և նա ձեռնտու ու շահաւէտ կը լինի միայն այն տարրերի համար, որոնք չեն ախորժում պանդուխտների վերադարձին և նրանց կանոնաւոր տնտեսական կենցաղավարութեանը:

Մենք, անշուշտ, ամենևին այնքան լաւատես և պարզամիտ չենք, որ կարծենք՝ թէ Թիւրքիայում մի եդեմ է ստեղծվել և որ արհաւիրքների մղձաւանջը վերացել է այնտեղից առ միշտ: Ոչ: Թիւրքիայում կարող են ամէն տեսակ դէպքեր տեղի ունենալ: Բայց մենք ընդգծում ենք և առանձին շեշտով պնդում, որ Թիւրքահայերի վերադարձի խնդիրը և նրա գործնական լուծման վիճակը չը պէտք է դաւադրութեան և թեթևամտութեան զոհ դարձնել, որ պէտք է դէն շպրտել ամէն մի անհիմն յուզիչ լուր, որը կարող է արգելք լինել Թիւրքահայ պանդուխտների վերահաստատմանը իր մայր հողի վրա և տնտեսութեան վերակազմութեանը:

Եւ ուրեմն՝ ոչ թէ պէտք է սարսափել ամէն տեսակ ենթադրութիւններից և չը ստուգված լուրերից, այլ ընդհակառակը ամէն միջոց գործ դընել, որպէսզի պանդուխտների վերադարձը ապահովվի և նրանց վերահաստատումը իրանց հողերի վրա աջակցութեան և խրախոյսի արժանանայ թէ օսմանեան պարլամենտի և թէ տեղական առեանների կողմից:

Անշուշտ, Թիւրքահայաստանի տեղական գործողների վրա ծանրանում է մի խոշոր բարոյական պարտաւորութիւն՝ ցրելու ամէն տեսակ թիւրիմացութիւններ, որոնք խոչընդոտ են հանդիսանում երկրագործի վերահաստատմանը իր երկրում և առիթներ են ծառայում չարամիտ և չարախօս դաւադիրների ձեռքում քշելու երկրի իսկական աշխատաւորներին իրանց ծննդավայրերից:

Թիւրքահայաստանի իր ժողովրդից դատարկվելը և թափուր մնալը մի այնպիսի խոշոր աղէտ է, որ չէ կարելի թոյլ տալ ոտնձգութիւններ, որոնք նորանոր արգելքներ ստեղծեն երկրի վերաշինութեան համար:

Ամէն մի յուզիչ լուր, ամէն մի երկիւղ ազդող տեղեկութիւն պէտք է տեղն ու տեղը ստուգվի, որպէսզի կեղծիքը լուծվի իսկութիւնից և անտեղի վրդովմունքներ առաջ չը գան ժողովրդի մէջ և դանդաղեցնեն տնտեսական և հասարակական վերածնութեան գործը:

Մինչև այժմ տարածված լուրերը չափազանց անհիմն և դաւադրական են եղել:

Մենք յոյս ենք տածում, որ Թիւրքահայաստանի վերաբերութեամբ օսմանեան ներկայ կառավարութիւնը անազնիւ ծրագիրներ չունի և տրամադիր չէ նորից արեան բաղանիքներ ու բարդուղիմէոսեան գիշերներ սարքել:

Ուստի թող Թիւրքահայ պանդուխտները չը յետաձգեն և չը դանդաղեցնեն իրանց վերադարձը դէպի երկիր և այնտեղ եղածներն էլ չը փախչեն իրանց հողերից ներկայումս, երբ տանը հարկաւոր են աշխատաւոր ձեռքեր հողը մշակելու և տնտեսութիւնը վարելու համար:

Ա. Քալանթար

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 3 մարտի

Վերջին օրերս Պետերբուրգում տեղի ունեցող բանակցութիւնները Րիփաթ փաշայի հետ՝ Ռուսաստանի յայտնի առաջարկութեան առիթով ֆինանսական միջնորդութեան մասին Թիւրքիայի և Բօլգարիայի միջև, աւարտվեցին այսօր մի արձանագրութեան ստորագրութեամբ, որի բովանդակութիւնը սակայն պէտք է երկու կառավարութիւնների վերջնական հաւանութեանը ենթարկվի: Նրա գլխաւոր կէտերը հետևեալն են յանգում: Դիւրացնելու համար վերջնական հաշիւը Թիւրքիայի պահանջների վերաբերմամբ Բօլգարիայից, որոնց գումարը որոշված է 125 միլիոն ֆրանկ առձեռն, ռուսաց կառավարութիւնը տալիս է Թիւրքիային Ռուսաստանի ստանալիք պատերազմական վարձատրութեան տարեկան այդ վճարների թիւը, որը անհրաժեշտ է, որպէսզի Թիւրքիան ստանայ վերոյիշեալ գումարը փոխառութեան միջոցով թիւրքական վարկի և եւրոպական դրամական շուկայի ներկայ պայմանների ժամանակ: Համաձայնութեամբ նոյնպէս նախատեսվում է Թիւրքիայի համար հնարաւորութիւն մերձաւոր ժամանակում միանուագ հանգցնելու, գիջած վճարները հանելուց յետոյ, պատերազմական վարձատրութեան մի մասը, նոյնպէս և կապիտալիզացիայի միջոցով, սակայն միայն այն դէպքում, եթէ հնարաւոր լինի կատարել այն օպերացիան չորս տոկոս ալպարիից կամ թէ վերջում առանձին պայմանով երկու կառավարութիւնների միջև: Իր կողմից Թիւրքիան համաձայնութիւն է յայտնում չը հակառակվել Բօլգարիայի անկախութիւնը ճանաչելուն, հէնց որ տեղի կունենայ կանօնաւորումն վերոյիշեալ դրամական հաշւի և մի քանի այլ հարցերի, որոնք վէճի առարկայ էին նրա և Բօլգարիայի միջև: Վերջապէս պէտք է էլի յիշել, որ ընդհանուր 125 միլիոն ֆրանկ գումարի մէջ մտնում է և արևելեան երկաթուղիների ընկերութեան վարձատրութիւնը՝ այն հողամասի համար, որ անցաւ բօլգարական կառավարութեան վարչութեանը: (Հ. Գ.)

ԲՈՂՈՔ ԱՒՍՏՐԻԱՅԻ ԴԷՄ

Պետերբուրգ, 3 մարտի

Պետական Դումայի զանազան ֆրակցիաների անդամները ստորագրութիւններ են ժողովում Մակլակովի մշակած դիմումի համար, ուղղված աշխարհի բոլոր պարլամենտներին: Դիմումի մէջ ասված է, որ «առաջացող հուժկու պատահարները ի նկատի ունենալով, Դումայի անդամները կատարում են իրանց պարտականութիւնը, վերջին փորձն անելով խափանելու աշխարհային դժբաղդութիւնը, և կոչ են անում կուլտուրական աշխարհի բոլոր օրէնսդրական հաստատութիւնների անդամների խղճին և խելացիութեան. ցոյց է տրվում, որ Աւստրիան առանց մեծ պետութիւնների համաձայնութեան միացրեց երկու նահանգներ և այժմ սպառնում է Սերբիային: Սերբիայի շահերն աւելի մօտ են Ռուսաստանին, քան Եւրոպայի միւս ժողովուրդներին, բայց թող բոլոր ժողովուրդները գիտենան, որ Աւստրիայի գործողութիւնները սպառնում են ոչ միայն Սերբիային, այլ և ամենին: Աւստրիայի յաղթութիւնից յետոյ, ընդհանուր պատերազմն անխուսափելի է: Հետևանքներն այնպիսի սոսկալի ու սարսափելի են, որ Դումայի անդամները յորդոր են կարդում եւրոպական ժողովուրդների ներկայացուցիչներին առաջն առնել և կանգնեցնել Աւստրիային իր անուղղելի քայլից»: (Հ. Գ.)

ՍԵՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Վիէննա, 2 մարտի

Բօրսան բացվեց շատ վհատված տրամադրութեամբ այն լուրերի ազդեցութեան տակ, թէ Աւստրիան ուզում է ուլտիմատում ուղարկել Սերբիային: «Մօնտագս Ցայտունգ» մի խիստ յօդուածով ռուսական քաղաքականութեան դէմ այն համոզմունքն է յայտնում, որ Ռուսաստանը չի կանգ առնի պատերազմի առաջ, եթէ Աւստրո-Ունգարիան յարձակում գործէ Սերբիայի վրա: Լրագիրը հաղորդում է ղեկավարող շրջաններից, որ Աւստրո-Ունգարիան, սերբիական պատասխանի անբաւարարութեան դէպքում լուրջ միջոցների կը դիմէ, ստիպելու համար դրութիւնը որոշելու: Որպէս յայտնի դարձաւ, Սերբիայի պատասխանի բովանդակութիւնը բոր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լօնդօն, 15 փետրվար (ն. տ.)

Որքան որ ալ օրերէ ի վեր պատրաստուած էինք՝ Միութիւն և Յառաջդիմութիւն կօմիտէի կատարելիք coup-de-main-ին, այսու հանդերձ Քեամիլ փաշայի դահլիճին անկման լուրը անակնկալի մը տպաւորութիւնը թողուց տեղւոյս մամուլին վրայ, այնքան որ տարօրինակ հանգամանքներու ներքև կատարուեցաւ այդ:

Պատրաստուած էինք, ըսի, որովհետև ալ գաղտնիք մը չէր որ ծերունի փաշային զգալի համակրանքը՝ հանդէպ Ազատական Միութեան,—որու խնճոյքին իսկ բանախօսեց քանի մը շաբաթ առաջ,—տեսակ մը փուշ հանդիսացած էր Մ. և Յ. կօմիտէի կողին, որ ամէն ջանք ի գործ կը դնէր դաւադրութիւն մը լարելու և զայն վար առնելու:

Ամենուն ծանօթ է առաջին փորձը, որ վիժեցաւ, և խորհրդարանը միահամուռ իր վստահութիւնը արտայայտեց ջախջախիչ քուէով մը: Սակայն մեծ եպարքոսին անցեալ օրուայ մէկ սխալ քայլը—թէև սահմանադրական—անհամեմատօրէն շատ աւելի վնաս հասցուց իր խախուտ դիրքին՝ քան ինչ որ կօմիտէին ամիսներու ճիգերը յաջողած էին:

Քեամիլ-փաշա կարուկ եղանակով մը ծովային, պատերազմական և դատախազութեան մինիստրները հրաժարեցնելով՝ անոնց փոխարինեց ուրիշներ, որոնք Ազատական Միութեան կը պատկանէին, մինչ նախորդները, տեղաւորուած ըլլալով կօմիտէին կողմէ, իրենց համակրանքը անոնց էր: Կօմիտէն զգաց իրեն սպառնացող վտանգը և, երբև բողոք, պարտաւորեցուց իրեն համակիր միւս մինիստրները՝ կամաւ հրաժարիլ, ինչ որ կատարուեցաւ շատ սիստեմատիկ կերպով: Զգուհացած այսքանէն, կօմիտէն իր խորհրդարանի անդամներուն միջոցով բացատրութիւն պահանջեց Քեամիլէ՝ հարցապնդման մը ձևուն տակ: Վարչապետը, մերժելով ներկայ գտնուիլ այդ օր (շբ. 13 փետր.), յետաձգել ուզեց բացատրութիւնը մինչև յաջորդ դշ., յենլով սահմանադրական օրինաց XXXVIII յօդուածին վրայ, որով մինիստր մը իրաւունք ունի իր բացատրութիւնը քանի մը օրով յետաձգել: Սա անխորժելի չէր հարցապնդիչներուն, ու Քեամիլի ներկայութիւնն ու բացատրութիւնը պահանջեցին ճիշդ այդ օր: Հրաւէր հրաւէրի ետևէ գնաց, բայց Քեամիլ փաշա անխոհեմութիւնն ունեցաւ մերժել «խորհրդարանի» հրաւէրը և յաջորդ րոպէին անվստահութեան քուէ մը անցաւ իր վրայ, 198 ընդդէմ 8-ի... Ու սա, ճիշդ մէկ ամիս վերջ այն օրէն, երբ միևնոյն խորհրդարանը միևնոյն ջախջախիչ մեծամասնութիւնով քուէ անցուցած էր՝ վստահութեան... Բնաւ զարմանալի կէտ մը չէ սա, երբ աչքի առաջ ունենանք «Times»-ի այսօրուան Պօլսէն հեռագիրը թէ՝ «անդամներէն շատեր քուէ տուին իրենց համոզման դէմ և ի հնազանդութիւն, ինչ որ իրենք կը նկատէին, առաւել կամ նուազ վարագուրեալ ստիպման մը» կօմիտէին կողմէ: Եւ ուրիշ ելք չէր մնար Քեամիլի՝ բայց հրաժարիլ:

Ասիկա, անտարակոյս, մեծ յաղթանակ մըն է կօմիտէին համար, որու փայլող աստղը Ահմէդ Րիզան է, բայց, հակառակ բոլորին, մենք կը կասկածինք, որ երկար վայելելու կարող ըլլայ այն այս խլուած դափնին: Թէպէտև Քեամիլ փաշայի անկումը վերակենդանութեան նշան է այս կուսակցութեան, սակայն շատ բարեգուշակ պարագայ մը չըլլալով սա Թիւրքիոյ այլացեղ տարրերուն և նոյնիսկ իրեն՝ թիւրք ժողովրդին համար, որոնց ազատութեան հետ կը խաղան պանսկ անզգոյշ եղանակով մը, կասկած չկայ թէ անոնք տարբեր կերպով պիտի վարուէին այսուհետև, առանց անոնց յաւակնոտութիւններէն քչուելու:

Անակնկալ մը չէ որ անգլիական մամուլը, հակառակ կանխապէս իր շռայլած գովասանաց, միահամուռ կը պախարակէ կօմիտէին այս հակասահմանադրական քայլը: Երեկոյեան թերթերը արդէն կիմացնեն թէ Պօլսոյ մէջ ալ բողոքի ձայներ կը լսուին իրենց դէմ և համակրական ցոյցեր կըլլուին հրաժարեալ եպարքոսին համար:

«Times», որու՝ Թիւրքիոյ նոր ռէժիմին հանդէպ ցուցած լաւատեսութիւնը անսահման էր, յենլով այսօր իր Պօլսոյ թղթակցին ընդարձակ հեռագրին վրայ, խստօրէն կը քննադատէ Մ. և Յ. կօմիտէն և կը յայտնէ թէ ինչ ելք որ ունենայ սոյն անխոհեմ ու յախուռն coup-ը, ատոր բովանդակ պատասխանատուութիւնը կը ծանրանայ կօմիտէի ուսերուն վրայ, որ վրէժխնդրական եռանդէ մը տարուելով՝ յառաջացուց ներկայ անտեղի տագնապը: Փաստերու ամբողջութիւնը դեռ ևս չունինք մեր առջև,—կը գրէ «Times»,—մէկ կամ միւս կողմը գովելու կամ քննադատելու համար. սակայն եղածները բաւական են ապացուցանելու թէ կօմիտէն սխալ գործեց, որուն համար անշուշտ պիտի տուժէ մօտ ապագային:

Կօմիտէն չսիրեց Քեամիլը, որովհետև ան մերժեց անոր ձեռքը խաղալիք մը ըլլալ, հակառակ իր ծեր տարիքին:

«Daily Telegraph» կը գրէ. «Իրենց ճանչցած բոլոր մեծ վէզիրները մէկ-մէկ պուպրիկներ էին, ու անոնք խորհեցան, որ եթէ իրենց ձեռքը խաղալիք չըլլայ Քեամիլ, զէնք մը պէտք է հանդիսանայ Ելտըզին և գաղտնի գործիք մը՝ յետադիմութեան: Գոնէ իրենց մէկ եզրակացութեան մէջ բոլորովին սխալ էին անոնք: Յիրաւի, եթէ առաւել փորձառութիւն ունենային, պիտի տեսնէին թէ Քեամիլ փաշա շատ աւելի սահմանադրական տեսակէտով մը կը նայէր իր դիրքին ու պարտականութեան վրայ՝ քան թէ իրենք»:

«Standard» կը գրէ. «Ուշ թէ կանուխ կօմիտէն պէտք է հրաժարի իր յաւակնոտութիւններէն, ապա թէ ոչ ինքն ալ կիյնայ, հակառակ իր կամաց: Իր անդամներն արժանացան իրենց երկրացիներու երախտագիտութեան, բայց անոնք խելացութիւն կընեն շատ յառաջ չերթալ այդ զգացման վրայ: Անգամ մը որ սահմանադրական կառավարութիւնը ամրապէս հաստատուեցաւ,—և պէտք է խորհիլ, որ դա արդէն տիրացուած է,—իրենց կազմակերպութիւնն ու մեթօդները պէտք է փոխուին, ապա թէ ոչ կը դադրին գլխաւոր տեղ մը գրաւելէ քաղաքականութեան մէջ»:

«Globe», իրիկնային կարևոր թերթ մը, կը գրէ. «Ուրիշ խօսքով, երիտասարդ-թիւրքերու կօմիտէն, որ այնքան էական ու թանկ էր Թիւրքիոյ՝ սահմանադրական կառավարութեան մը տիրանալու համար, կարծես վտանգի աղբիւր մը պիտի հանդիսանայ, եթէ ինքզինքը գերակշիռ իշխանութիւն մը նկատէ: Եթէ սահմանադրականութիւնը ազատ փորձ մը պէտք է ունենայ օսմանեան կայսրութեան մէջ և յաջող հանդիսանայ, գործադիր ժողովի պարլամենտին պատասխանատուութիւնը միայն հարկ է երբև կառավարութեան հիմնական ըսկզբունք մը ճանչցուի: Ոևէ ճիգ դուրսէն՝ մինիստրներու գործին խառնուելու վտանգ կը նշանակէ... Կը խոստովանինք թէ ընդվզիչ բան մըն է այնպէս աճապարանօք մինիստրի մը արտաքսումը՝ առանց անոր բացատրութեան սպասելու»:

«Pal Mal Gazette» կը գրէ. «Եթէ պարլամենտը իրապէս Քեամիլ փաշան լսել ուզէր անկողմնակալօրէն, կը շնորհէր իրեն խնդրուած յապաղումը: Բայց այդ չէր. Քեամիլ պէտք էր հեռանար,—և ոչ թէ տակաւ, այլ անմիջապէս»: Ընդհանուր եղանակով մը չենք ուզեր դատապարտել կօմիտէն, կը շարունակէ թերթը, որովհետև երկիրը շատ բան կը պարտի անոր. «Սակայն հարց է թէ իմաստուն գործ մըն է իրեն կողմէ՝ շարունակել տեսակ մը imperium in imperio ի գործ դնել՝ սահմանադրական մեքենան շարժումութեան մէջ դնելէ յետոյ, որ իսկապէս, մինչև շաբաթ օր, կանոնաւորապէս կը գործէր»:

Այս թերթն ալ, միւսներուն նման խրատելով անգլիական կառավարութիւնը բնաւ չմիջամտել՝ որպէսզի խնդիրը չբարդուի, այլ թողուլ որ անոնք ինքնին յղկեն իրենց գործերը, կը վերջացնէ սա ձևով.

«Մեզ չի մնար պախարակել մարդիկ՝ որ ազատութեան պայքարը կը մղեն, եթէ անոնք չեն կրցած ձեռք բերել մի քանի ամիսէն այն՝ ինչ որ մեր նախահարք նոյնքան թէլով դարեր առին տիրանալու»:

Մինչև ներկայ թղթակցութեանս հրատարակումը թերևս բազմաթիւ դէպքեր պատահին: Բայց, ինչ որ ալ տեղի ունենայ, հակայեղափոխական և յետադիմական զարթնումի մը վախ չկայ երբեք: Եթէ թերթեր կը հեռագրեն թէ հրազէնի յաճախադէպ պայթիւններ կը լսուին Պօլիս, ատոր ալ պատճառն այն է, որ յիշեալ մահացու գործիքը հիմա Պօլսոյ մէջ խաղալիքի դեր կը կատարէ, դպրոցականէն մինչև գերեզմանականը հատ մը ունի գրպանը, և, որքան որ կը տեսնուի, ատոր ձայնը լսել շատ կախորժին:

Մինաս-Ցոլակ

սայում նոր նշանաւոր վհատութիւն առաջացրեց: Լրագիրներից միմիայն «Նեօյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» նկատում է խուսափողական պատասխանի մէջ մի քանի բարեյաջող նշաններ, որովհետև Սերբիան չը թողեց կոմս Ֆորգաչին առանց պատասխանի, դռները չը փակեց բանակցութիւնների համար: «Նէյէս-Վինէր-Տագէբլատ» լրագիրը անբաւարար է գտնում: «Ցէյտ» հաստատում է, որ Ֆորգաչի քայլը, որը անաջող դուրս եկաւ, տասն օր կորցնել տուեց. անհրաժեշտ է անյապաղ պարզել դրութիւնը, պահանջելով Սերբիայի զինաթափումն և մերժելով պետութիւններին երկմիտ ընթացքից:
(Հ. Գ.)

Վիեննա, 3 մարտի

Մամուլը գրգռված տոնով պահանջում է դրութիւնը պարզել:

«Կոր. Բիւրօյին» Սալոնիկից հաղորդում են, որ Բէլօկամէնում Նիկոլայ քահանայի տան մէջ գտնվեց ուժանակի 40 ռումբ և պայթուցիկ նիւթեր:

Սերբիան Բրիւսէլում պատուէր տուեց 15 տոն վառօդ, իր վրա վերցնելով պատասխանատուութիւնը, որ Թիւրքաց կառավարութիւնը թոյլ կը տայ անցկացնել այդ վառօդը Սալոնիկի վրայով Ռիստովաց: (Հ. Գ.)

Բէլգրադ, 3 մարտի

Մինիստր-նախագահ Նօվակօվիչը մարտի 2-ին կոմս Ֆորգաչին երկարատև այցելութիւն գործեց, որի ժամանակ տեղի ունեցաւ մտքերի լուրջ փոխանակութիւն սերբիական պատասխան նօտայի բնաւորութեան վերաբերութեամբ:

«Պրէս բիւրօ» հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստրը յանձնեց Կ. Պօլսի սերբիական դեսպանին ամենալուրջ կերպով հերքել Բ. Դրան շրջաններում տարածված այն տեղեկութիւնը, երբ Սերբիան մտադրութիւն ունի գրաւել Նօվօ-Բազարի սանջակը: (Հ. Գ.)

Վիեննա, 3 մարտի

Պատգամաւորների պալատում նորակոչների օրինագծի քննութեան ժամանակ Բինէրտն ասաց. «Սերբիական կառավարութեան պատասխանը համապատասխան չէ մեր սպասելիքներին: Մենք ամենասիրալիր կերպով ցանկանում էինք ձեռք մեկնել Սերբիային, իսկ նա խուսափեց: Բայց և այնպէս մինչև նրա մտադրութիւնները իմանալը մենք անկարող ենք բանակցութիւններ սկսել նրա հետ տնտեսական հարցերի վերաբերութեամբ»:
(Հ. Գ.)

Բերլին, 3 մարտի

«Ֆոսսիշէ Ցայտ.»-ին Պրագայից հեռագրում են. «Կառավարութիւնը պատուիրագրեց պօստային հաստատութիւններին սահմանել անընդհատ գիշերային ծառայութիւն: Լրագիրների խմբագիրներին խստագոյնս արգելված է տեղեկութիւններ տալ զօրքերի տեղափոխութիւնների մասին»:

«Ֆոսսիշէ Ցայտ.»-ը չափազանց յուզված է Սերբիայի վարմունքից: Բոլոր հասարակական տեղերում սերբիական պատասխանը խօսակցութիւնների միակ թեման է դարձել: Ազգաբնակութիւնը համոզված է, որ պատերազմը անխուսափելի է: (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 3 մարտի

Ռուս-թիւրքական համաձայնութեան տեղեկութիւնը առայժմ քննում է «Թանին» լրագիրը:

Գերմանական և աւստրիական մամուլի տարածած յամառ լուրերի առիթով, երբ Սերբիան մտադրութիւն ունի գրաւել Նօվօ-Բազարի սանջակը, սերբիական դեսպանը Բ. Դրան յայտնեց, որ Սերբիան ոչ մի այդպիսի մտադրութիւն չունի: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 3 մարտի

«Կորրէսպօնդէնց-Բիւրօն» հաղորդում է. «Սերբիական յայտագրի քաղաքական մասը անգոհացուցիչ է համարվում: Չէ ընդունվում Սերբիայի շրջաբերական յայտագրի վրա մանրազննումը մեր կողմից, որովհետև նրա բովանդակութիւնը անգոհացուցիչ է համարվում: Յայտագիրը ապացոյց է այն բանի, որ Բէլգրադում ամեն ջանքեր են գործ դնում, որպէսզի արգելեն մեր ձգտումները պարզութիւն մտցնելու միապետութեան և Սերբիայի միջև եղած յարաբերութիւնների մէջ և վերջ դնելու ապագայ զինման»: (Հ. Գ.)

Բերլին, 3 մարտի

Երեկոյեան լրագիրների բօրսային հաշիւների մէջ շեշտվում է, որ բօրսայում երկիւղալի տրամադրութիւն է տիրում: Աւստրիական կառավարութեան համբերութիւնը վերջ ի վերջոյ կարող է հատնել. այդ պատճառով բօրսան վախենում էր թշնամական գործողութիւնները շուտ սկսվելուց: Ուրիշ յօդուածներով լրագիրները նոյնպէս խօսում են պատերազմի երկիւղների մասին, դրութիւնը համարելով շատ լարված: Աւելի խիստ է վերաբերվում Սերբիային «Լօկալ-Անցէյգէր»-ը, որը գտնում է, որ սերբիական պատասխանը կարելի է համարել որպէս ակների ծաղր: Ապա լրագիրը խօսում է այն անթոյլատրելի փաստի մասին, որ խաղում են սերբերը, որի պատճառով Աւստրիային մնում է միայն ընդհատել դիպլօմատիական յարաբերութիւնները այն կառավարութեան հետ, որ աշխատում է ինչ էլ լինի պատերազմ առաջացնել: «Բերլինէր-Տագէբլատ» ընդհակառակը հարց է տալիս, թէ ինչու Աւստրո-Ունգարիան առաջարկութիւններ չէ անում մնացած պետութիւններին՝ սկսելու միաբանութեամբ քննել կօֆերէնցիայի պրօգրամը: Էրէնտալը, լրագրի խօսքով, սխալ է անում Եւրօպայի համակրութիւնը գրաւող քայլ անելու համար: Լրագիրը խորհուրդ է տալիս գերմանական կառավարութեանը ազդել վերջապէս այդ մտքով Վիեննայում: (Հ. Գ)

Վիեննա, 3 մարտի

«Նէյէս-Վինէր-Տագէբլատ» լրագրում տպված է մի աշխատակցի խօսակցութիւնը Վիեննայի սերբիական դեսպանի հետ, որը յայտնեց, որ նրա կարծիքով բանը պատերազմի չի հասնի: Նա ապա մատնացոյց է անում, որ իրան յայտնի են սերբիական կառավարութեան դիտաւորութիւնները. աւստրիական ղեկավարող շրջաններում պատերազմ չեն ցանկանում, այդ պատճառով հնարաւոր կը լինի վերացնել կամ խաղաղ կերպով լուծել տարաձայնութիւնը, որպիսի էլ լինեն նրանք: (Հ. Գ)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլսից հեռագրում են «Баку»-ին.

Վերջացան ռուս-թիւրքական բանակցութիւնները այն 60,000 հայերի մասին, որոնք 1895—6 թւականների կոտորածների ժամանակ փախել ու ապաստանել էին Կովկաս:

Բանակցութիւնները վերջացել են նրանով, որ թիւրքական կառավարութիւնը համաձայնութիւն է տուել թոյլատրել Ռուսաստան գաղթողներին վերադառնալ Վան և Էրզրում այն պայմանով, որ նրանք թիւրքական անցագրեր ունենան:

Ռուսական հպատակութեան մէջ մնալ ցանկացողները զրկվում են Թիւրքիայում ապրելու իրաւունքից:

Կեսարիայում 500 հոգուց բաղկացած ռէակցիօն ամբոխը յարձակվել է քաղաքի կառավարիչ Ջեմալ-բէյի տան վրա: Զօրքերի և ոստիկանութեան միջամտութեամբ միայն հնարաւոր է եղել ազատել նրան ամբոխի կատաղութիւնից:

Ռէակցիօներները մեղադրում են Ջեմալ-բէյին «Օսմանլը Էհրար» (Օսմանեան ազատամիտ կուսակցութիւն) կուսակցութեանը պատկանելու համար: «Օսմանլը Էհրար» է կոչվում այժմ Սաբահէդդինի կուսակցութիւնը, որ առաջ կոչվում էր «Ապակենտրոնացման և մասնաւոր ձեռներէցութեան» կուսակցութիւն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 2 մարտի

Յեղափոխականների ու կառավարչական զօրքերի միջև վճռական ընդհարում է տեղի ունեցել:

Էյն-ուդ-Դօվլէն՝ կենտրոնից, Սամադ խանը՝ ձախ թևից և Մակուի սարդարը՝ աջ թևից միաժամանակ հարձակման գրոհ տուին:

Առաջին վայրկեանում յեղափոխական շարքերը ցնցվեցին և պատրաստվում էին արդէն նահանջել, բայց ոգևորվելով իրանց առաջնորդների օրինակից, իրանք ևս փոխադարձաբար յարձակում գործեցին:

Հինգ ժամվայ կուից յետոյ կառավարական զօրքերը, գլխովին ջարդ կրելով, հարկադրված եղան անկարգ փախուստի դիմել: («Баку»)

Ջուլֆա, 2 մարտի

Ղարադաղցի ռէակցիօներները, գնալով Ջուլֆայի վրա, ճանապարհին աւերել են տասը գիւղեր:

Զօրս ռուսահպատակ կանայք՝ մայրեր իրանց երեխաներով, հրոսակախմբերի ձեռքից փախչելով, նետվել են Արաքս գետի յորձանքների մէջ: Նրանց դրութիւնը անյայտ է: («Баку»)

Թէհրան, 3 մարտի

Երկրի պարբերաբար շարունակվող յուզմունքները հարկադրեցին շահին խաղաղեցնելու քայլեր անել: Երէկ պրինց Նայիբ-ուս-Սալթանէն նախագահութեամբ, որ իր վրա միջնորդի դեր ընդունեց, տեղի ունեցաւ մինիստրների նիստը: Արտաքին գործերի մինիստրը առաջարկեց ժողով գումարել քաղաքի աւելի ժողովրդական մարդկանցից՝ սահմանադրութեան հիմքերը և երկիրը խաղաղեցնելու միջոցներ մշակելու համար: Չը նայած մի քանի պալատականների դիմադրութեան, շահը ռուսաց միսսիայի բարեկամական խորհուրդների շնորհիւ առաջարկութիւնը ընդունեց: Ժողովը մօտ օրերս կը դիմէ պարապմունքների: Շահը մարտի 2-ին խորհրդակցեց երկու ժամ շարունակ ռուսաց հաւատարմատարի հետ: (Հ. Գ.)

Ռաշտ, 2 մարտի

Ղազվինի մօտերքում յեղափոխականները յարձակում գործեցին պահպանողականների առաջապահ շարքերի վրա, սպանեցին նրանց երկու պարագլուխներին՝ Նասիր խանին և Իբրահիմ խանին: Մնացեալները ձգելով հրացաններն ու ձիաները, փախուստի դիմեցին: («Кавк.»)

«Рус. Сл.»-ին հեռագրում են Ռաշտից.

Շահի զօրքերի հրամանատարը Ռաշտի մօտ փորձ արեց բանակցութիւն սկսել յեղափոխականների հետ, բայց վերջինները կտրականապէս յայտնեցին, որ իրանք մի նշանաբան ունեն՝ «սահմանադրութիւն կամ մահ»:

Մօտ օրերս յեղափոխականները նոր օգնական ույժեր ստացան: Ազգաբնակութեան տրամադրութիւնը ռազմական է:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգից հեռագրում են «Баку»-ին.

Ստօլիպինի հիւանդութեան պատճառով Պետական Դումայի և Խորհրդի կենտրոնները երկիւղ են կրում, որ մի գուցէ աջակողմեանների ազդեցութիւնը ուժեղանայ պալատում:

Ֆինանսների մինիստրի պաշտօնի համար հաւանական թեկնածու են համարում երկրագործութեան նախկին մինիստր Նիկօլսկուն:

Ֆրանկֆուրտ—Մայնի վրա, 3 մարտի

«Ֆրանկ. Ցայտ.»-ի թղթակիցը Պարիզից հեռագրում է. «Աւստրո-Ունգարական կառավարութիւնը Գերմանիայի միջոցով տեղեկացրեց բոլոր մեծ պետութիւններին, որ Աւստրիան պատրաստ է մասնակցել կօնֆերէնցիային Մերձաւոր Արևելքի մասին խորհրդակցելու համար՝ հետևեալ երեք պայմաններով. ճանաչել Բօլգարիային անկախ, ընդունել Թիւրքիայի և Աւստրիայի համաձայնութիւնը՝ վերաբերեալ Չեռնօգօրիային, նոյնպէս և Բերլինեան դաշնադրութեան 29-րդ յօդուածը: Միևնոյն ժամանակ Աւստրիան դէմ է տնտեսական բնաւորութիւն ունեցող հարցերի քննութեան»: (Հ. Գ.)

Ստօկհօլմ, 3 մարտի

Արտաքին գործերի մինիստր Տրօլլէն, երկրագործութեան մինիստր Պետերսօնը և առանց պօրտֆէլի մինիստր Ռօօսը հրաժարական տուին: (Հ. Գ.)

Պարիզ, 3 մարտի

Երէկ ցերեկով գլխաւոր հեռագրատանը հանգստութիւնը ըստ երևոյթին վերականգնվեց, բայց հեռագրական հաղորդակցութիւնը վատ եղանակի պատճառով դժուարանում է, առանձնապէս Գերմանիայի, Դանիայի և Անգլիայի հետ: Գործադուլների փչացրած բոլոր գործիքները նորոգվեցին: Պօստհեռագրական ծառայողները խորհում են ընդհանուր գործադուլի մասին:
(Հ. Գ.)

Պարիզ, 3 մարտի

Գլխաւոր հեռագրատանը ծառայողներին փոխելու ժամանակ հերթապահները հրաժարվեցին աշխատել, կշտամբելով հեռացողներին, թէ ամբողջ գիշեր հեռագրատունը հեռագիրներ բաց թողեց: Տեղի ունեցաւ աղմկալից ցոյց, որի ժամանակ պատուհանի ապակիները ջարդեցին: Ստատս սեկրէտարի օգնական Սիմիանը դահլիճ մտաւ ոստիկանապետի ուղեկցութեամբ և առաջարկեց հեռագրական ծառայողներին հեռանալ կամ աշխատանքի կպչել: Մօտ 15 յանցաւորներ դուրս գնացին դահլիճից. մնացածները աշխատանքները վերսկսեցին: Ոստիկանները հեռացան: Միայն մի դահլիճում, էլեկտրականութեան սակաւութեան պատճառով, չէին աշխատում: Աշխատելուց հրաժարված ծառայողները արձակվեցին: Ոստիկանական դատարանը եօթ ծառայողների դատապարտեց վեց օրով բանտարկութեան Սիմիանի համար վիրաւորական բացագանչութիւններ անելու համար:
(Հ. Գ.)

Վիեննա, 3 մարտի

Պատգամաւորների պալատում կարդացվեց նորակոչների օրինագիծը: Պատգամաւորներից մէկը, յենվելով նախկին մի ունտէր-օֆիցէրի ցուցմունքի վրա, ասաց, որ գերիների հետ խիստ են վարվում: Պետական պաշտպանութեան մինիստրը բուռն ծափահարութիւնների տակ ընդհատեց հռետօրին, բացագանչելով «սուտ է», թոյլ չը տուեց վիրաւորել զօրքին, ապա ճառ արտասանեց, որով դրականապէս յայտնեց, որ խստութիւն աւստրիական զինւորների համար անհնարին բան է: (Հ. Գ.)

«Р. У.» լրագրի ասելով, մի քանի օր առաջ Լօնդօնում լուր է տարածվել, որ Աթէնքում դաւադրութիւն է երևան հանված յունական Գէօրգի թագաւորի կեանքի դէմ:

Դաւադրութիւնը նպատակ է ունեցել գահ նստեցնել ոչ թէ թագաժառանգին, այլ նրա աւագ որդի Գէօրգիին, և մինչև նրա չափահաս լինելը ռեգենտ նշանակել նրա մօրը՝ Սօֆիային:

Դաւադրութեան բոլոր գործակիցները արդէն յայտնի են, բայց պատասխանատուութեան ենթարկել նրանց համարվում է աննպատակայարմար պալատական դիտումներով:

Р А Х*)

Խաղաղութեան բանկէտը

Խաղաղասէրները ամեն տարի փետրվարի 18-ին (ն. տ.) գումարվում են Պարիզ, կազմակերպում բանկէտ և տօնում համաշխարհային խաղաղութեան գաղափարի տարած յաղթանակները տարվայ ընթացքում:

Այս տարի, փետրվարի 18-ին, անփոփոխ կերպով կայացաւ այդ բանկէտը, որի նախագահ ընտրվեց այս անգամ Պարիզի օսմանեան դեսպան Նաւում փաշան, ունենալով իր աջ կողմին խաղաղութեան անվեհեր մարտիկ ծերունի Ֆրէդերիկ Պասսիին և ձախ կողմին, յայտնի ֆրանսուհի գործիչ տիկին Սեվէրինին: Այդտեղ էին և խաղաղութեան բանակի բոլոր զօրավարները և յայտնի զինւորները՝ օրիորդ Ժիւլի Տուսսէն, պ. պ. Էմիլ Արնօ, Շարլ Րիշէ, Գաստօն Մօխ և բազմաթիւ հիւրեր:

Պերճախօս ճառեր արտասանվեցին. Ֆրեդերիկ Պասսին ատենաբանեց «զօրքի առաջադիմութեան մասին», Շարլ Րիշէ՝ «ողջոյն Երիտասարդ Թիւրքիային. խաղաղասէրները առաջինն մարդիկ են». դեսպան Նաւում փաշան՝ «խաղաղասէր միալը աւելի մեծ հերոսութիւն կարող է պահանջել, քան պատերազմը», Թոմաս Բէրկլայ՝ «Նոր Թիւրքիան, որ ես տեսայ, մի մօդել է», Շարլ Բօկլէ՝ «խաղաղասէր տիկնանց» և այլ խորիմաստ բնաբաններով ճառեր: Ճառեր խօսեցին և շատ ծափահարվեցին նաև տիկին Սեվէրինը, գերմանացի զօրավար Պուտտկամեր, Էմիլ Արնօ և ուրիշները:

Ի վերջոյ ակումբը միաձայն քուէարկեց ուղարկել համակրութեան մի հեռագիր օսմանեան պարլամենտի անդամ Ահմէդ Րիզային, որ նոյնպէս խաղաղասիրական բանակին է պատկանում, և կայացրեց հետևեալ որոշումները.

«I. Խաղաղասէրները, գումարված Պարիզում 1909 թ. փետրվարի 18-ին, բողոքում են հանդիսաւորապէս ույժի թագաւորութեան մեր լոյսի դարաշրջանում ունեցած յարատևութեան դէմ, և այդ այն ժամանակ, երբ ազգերը և կառավարութիւնները թախանձագին պահանջում են խաղաղութեան բարիքները:

«Նրանք նշանակում են, իբրև անբարոյական մի հողի փոխանցումը մի երկրից մի այլ երկրին, առանց նախապէս իմացած լինելով ազգաբնակութիւնների ազատ կամքը այդ մասին:

«Նրանք կարծում են նաև, որ բնիկների իրաւունքների լօյալ յարգումը թոյլ կը տար խուսափել ռէպրէսսիւ (պատժողական) արշաւախմբերից:

«II. Խաղասէրները շնորհաւորում են անկեղծօրէն այն կառավարութիւնները, որոնք նորերս ստորագրեցին Մարօկկօյի վերաբերեալ ֆրանս-գերմանական դաշնադրութիւնը:

«Նրանք յոյս են արտայայտում, որ ֆրանս-գերմանական յարաբերութիւնները կը լինեն այսուհետև իրաւունքի հսկողութեան ներքոյ բացառապէս և անկեղծօրէն խաղաղասէր: Եւ նրանք իղձ են յայտնում, որ իրաւարարութեան (արբիտրաժի) մի մշտական դաշնագիր կնքվի երկու երկրների միջև:

«III. Խաղաղասէրները ուղղում են օսմանեան ազգին իրանց ջերմ համակրութեան արտայայտութիւնը նրա ազատութիւնների հռչակման և նրա աներկբայելի խաղաղասիրական վարմունքի մասին:

«Նրանք շնորհակալութիւն են յայտնում Պարիզի օսմանեան պ. դեսպանին այդ կենդանի համակրութեան արտայայտութեան համար, որ նա, նախագահելով այս ժողովին, ցոյց տուեց խաղաղութեան կողմնակիցներին: Եւ նրանք խնդրում են նրան հաղորդել իր կառավարութեանը՝ իրանց իղձերը Թիւրքիայի փայլուն բարգաւաճման համար խաղաղութեան և առաջադիմութեան միջոցով»:

Փետրվարի 22-ին, բոլոր քաղաքակիրթ երկիրներում տեղի ունեցան հանդիսաւոր ցոյցեր ի պատիւ համաշխարհային խաղաղութեան: Յաջորդ անգամ կը հաղորդենք այդ ցոյցերի հետևանք բանաձևը:

Այս տարի, Հոգեգալստեան տօնի օրը, Ֆրանսիայի Ռէյմս քաղաքում կը կայանայ խաղաղութեան VI ազգային (ֆրանս.) կօնգրէսը, իսկ օգոստոսի 29—5 սեպտեմբերի Ստօկհօլմում տեղի կունենայ խաղաղութեան համաշխարհային XVIII կօնգրէսը, որին մասնակցելու հրաւիրված է և մեր խմբագրութեան անդամ պ. Հ. Առաքելեան, իբրև անդամ խաղաղասիրական եւրօպական մի քանի ընկերութիւնների:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Իգդիր, 28 փետրվարի

Մի խումբ իգդիրցի օրիորդներից և տղաներից—օր. օր. Ա. Ալադեանի, Գ. Պահլաւունու, Շ. Կանայեանցի և պ. Հ. Տէր-Յարութեանի միջոցով—ստացվել է Կ. Հ. Բ. Ընկ. Իգդիրի ճիւղի գրադարանի համար 600 կտոր գիրք, 2 սեղան և 2 պահարան: Վարչութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը նուիրաբերողներին և յորդոր է կարդում օտար տեղերում գտնվող հայրենակիցներին ևս չը խնայել իրանց օժանդակութիւնը՝ ընկերութեանս նորաբաց գրադարանին: Վարչութիւն

Թելաւ, 2 մարտի

Փետրվարի 28-ին, Թելաւի հայ և վրացի աշուղների նախաձեռնութեամբ մայր եկեղեցում պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ, ի յիշատակ Աշուղ-Ջիւանու: Ներկայ էին 22 աշուղներ, մեծամասնութիւնը կոյր, որոնք ողբում էին իրանց ուսուցչին: Ս.

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ ՄՕՏ

(Նամակ Մոսկվայից)

I

Ընթերցողը գիտէ, որ մեր համակրելի բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեան մօտ մի ամիս պառկած էր անկողնում: Մի քանի օր առաջ միայն լսելով, որ նրա լուրջ հիւանդութեան վտանգը անցած է և պ. Ծատուրեան կատարելապէս առողջանալու վրա է, ես վճռեցի այցելել պ. Ծատուրեանին և իր հիւանդութեան մասին մանրամասն տեղեկութիւններ ստանալ հէնց իրանից՝ բանաստեղծից:

Մի համեստ կահաւորված սենեակում ես գտայ պ. Ծատուրեանին նստած օրվայ ռուսերէն թերթը կարդալիս: Մեր ջերմ ողջոյնից յետոյ, թերթիս թղթակիցը ներողութիւն խնդրեց, որ իր ժամանակին չէ կատարել իր բարոյական պարտքը պ. Ծատուրեանի վերաբերմամբ. ասացի, որ ես մինչև այժմ հնարաւորութիւն չունէի այցելելու իրան՝ բանաստեղծին:

— Ոչինչ, ոչինչ, խնդրեմ, նստէք,—պատասխանեց պ. Ծատուրեանը:

— Պատմեցէք, խնդրեմ, թէ ինչ հիւանդութեամբ էիք տառապում և թէ ով էր բժշկում ձեզ:

— Բժիշկ չէր նա, այլ մի կատարեալ փրկիչ ինձ համար. իմ կեանքը մի մազից էր կախված: Ես տառապում էի թոքերի խիստ բորբոքումով (крупозное воспаленіе легкихъ), բժշկում էր Թիֆլիսեցի մի հայ բժիշկ՝ Միլրօն Արաղեան ազգանունով: Երբ ես հիւանդացայ, սկզբում 4 օր ոտքի վրա էի. հիւանդութեանս հէնց առաջին օրերում ես եղայ Գեղարուեստական թատրոնում, «Ревизоръ»-ի ներկայացմանը: Մի քանի օրից յետոյ հիւանդութիւնս սուր կերպարանք ստացաւ և ես պառկեցի սկզբում ինձ մօտ՝ համարներում, իսկ այնուհետև տիկ. Հախվերդեանի մօտ, ուր փոխադրել էին իմ մօտ ծանօթներն ու ընկերները: Պ. Արաղեան օրական 2—3 անգամ այցելում էր ինձ և միշտ էլ ցոյց տալիս վերին աստիճանի բարեխիղճ վերաբերմունք դէպի իր հիւանդը, դէպի ինձ: Տաքութիւնս յաճախ հասնում էր 40 աստիճանի. չը գիտէի թէ ինչ էր կատարվում շուրջս. ես մահամերձ հիւանդ էի: Պ. Շօրշօրեանն (բանաստեղծը ծառայում է նրա մօտ) ասած է եղել բժիշկ պ. Արաղեանին, որ վերջինս վարձատրութեան հարցում ամենևին չը ճնշվի, այլ վերցնի որքան կամենում է, միայն թէ բժշկէ կանոնաւոր, բարեխիղճ կերպով: Պ. Արաղեանն իր կողմից ասած է եղել, որ վարձատրութեան մասին խօսք լինել չէ կարող, քանի որ ինքը պացիենտի չէ բժշկում, այլ Ալէքս. Ծատուրեանին:

—Քանի որ ձեր հիւանդութիւնն այդ աստիճան սուր կերպարանք էր ստացել, մի՞թէ կարիք չը զգացվեց պրոֆեսոր հրաւիրելու:

— Ինչպէս չէ, կարիք զգացվեց ոչ միայն պրոֆեսոր հրաւիրելու, այլ և՝ կօնսիլիում անելու: Հրաւիրվեց պրոֆ. Շերվինսկի. նա ասաց, որ ամեն ինչ արված է կանոնաւոր, ամեն ինչ կատարված է խնամքով: Շնորհիւ բժիշկ պ. Արաղեանի լուրջ վերաբերմունքի և տիկ. Հախվերդեանի մայրական անձնուէր և հոգատար խնամքի՝ ես կարողացայ բժշկվել թոքերի բորբոքման նման մի ծանր և վտանգաւոր հիւանդութիւնից։

---

*) Այս վերնագրով մենք մի առանձին բաժին ենք բանում, ուր երբեմն երբեմն պիտի արձանագրենք համաշխարհային խաղաղութեան վերաբերեալ բոլոր գլխաւոր ակտերը և գրականութեան արտադրութիւնները:

— Ո՞րտեղ է աւարտել բժ. Աբազեանը։

— Դորպատ։ Ճիշդն ասած, ես չէի սպասում, որ մի համեստ բժիշկ կարող էր բժշկել իմ հիւանդութիւնը։ Ո՞վ կը սպասէր, որ ես կառողջանայի։ Շատերը ասում էին, որ Ալէքսանդրը պրծաւ, այլևս չենք տեսնելու նրան։ Եւ եթէ ես այսօր կենդանի եմ, այդ բժ. Աբազեանի և տիկ. Հախվերդեանի շնորհիւ միայն։ Հիանալի, աննման բժիշկ է պ. Աբազեանը։

— Ձեր ծանօթներից և ընկերներից հիւանդութեան ժամանակ այցելողներ կայի՞ն թէ ոչ։

— Այո՛, կային. ինձ այցելել են Իւրիյ Վեսելօվսկի, իրաւաբան Ստ. Մամիկոնեան, կար. Կուսիկեան, Էմմ. քահ. Նազարեան և ուրիշները։ Շորշորեանների մասին խօսք լինել չէ կարող, քանի որ նրանք յաճախ լինում էին։

— Այժմ ինչպէ՞ս էք զգում ձեզ։

— Չը նայած որ այժմ անհամեմատ լաւ եմ զգում ինձ, բայց դեռ վերջնականապէս ապաքինված չեմ։ Երևի մինչև մի շաբաթը կը գնամ ծառայութեան։

Մնացած խօսակցութիւնից երևաց, որ պ. Ծատուրեանի առողջանալուն մասամբ նպաստել է նաև այն հանգամանքը, որ նա շատ առողջ սիրտ ունի։ Եթէ իսկապէս նա առողջ սիրտ չունենար, դժուար թէ կարողանար դիմանալ այն ծանր հիւանդութեան, որպիսին pneumonia cr.-ն է։

II

Իր՝ Ծատուրեանի հիւանդութեան մասին խօսելուց յետոյ, մենք անցանք մեզ հետաքրքրող մի շարք հրատապ և այրող հարցերին, որոնք վերջերս ծնունդ են առել հայի կեանքում, հայկական իրականութեան մէջ։

Նախ և առաջ խօսք եղաւ հայ գործիչների վերջին յոբելեանների մասին։

— Դուք որևէ բանով մասնակցեցի՞ք Տիգ. Նազարեանի և դերասաններ Վրոյրի և տիկ. Սիրանոյշի յոբելեանին թէ ոչ,—հարցրի ես։

— Այո՛, մասնակցել եմ։ Տիգ. Նազարեանըն իմ վաղուցվայ մտերիմ ընկերն է. այդ մարդը մի անասելի եռանդով շարունակում է տանել իր սիրած ու փայփայած գործը։ Նա ամբողջ 25 տարի հայ մանուկներին կրթել և դաստիարակել է իր «Աղբիւրով»։

— Գիտէ՞ք, որ պ. Դաստակեանը մօտ 2000 րուբլի է հաւաքել «Աղբիւրի» ֆոնդի օգտին։

— Բաքուն, ժամանակակից այդ Սոդոմ-Գոմորը, լկտիացած Բաքուն 2000 րուբլի է տալիս այն մարդուն, որը ամբողջ 25 տարի անձնուիրութեամբ ծառայել է հայ մանուկների դաստիարակման գործին, հայկական մամուլին։

— Մօսկվայի հայերը որևէ բան արի՞ն «Աղբիւրի» համար թէ ոչ։

— Գրել էին, որ փող հաւաքենք. ես հիւանդ պառկած էի։ Իսկ գործիչներ, գիտէք, որ չունենք այստեղ։ Կարծեմ մի քանի հարիւր րուբլի մասնաւոր կերպով ուղարկված է։

Պ. Վրոյրի և տիկ. Սիրանոյշի մասին բանաստեղծ Ալ. Ծատուրեան ասաց հետևեալը.

— Ծանօթներիցս մէկին խնդրեցի, որ իմ կողմից շնորհաւորական հեռագիր ուղարկէ պ. Վրոյրին. հեռագիրը, ինչպէս գիտէք թերթերից, ուղարկված է։ Այնուհետև ես ընդարձակ նամակ գրեցի նրան։ Տիկին Սիրանոյշին ուղարկել եմ մի մեծ հեռագիր, բաղկացած 80 խօսքից։ 35 տարի նա ծառայել է հայկական բեմին և միշտ էլ աչքի է ընկել իր տաղանդով, իր ընդունակութիւնների ամբողջ փայլով։

— Ասա՛ հասարակ դուք, պ. Ծատուրեան, ի՞նչ մի երևելի բան էք գտնում հայ գործիչների յոբելեանների մէջ։

— Ոչինչ. մեր այս կամ այն գործչի յոբելեանը տօնելու գլխաւոր շարժառիթը միշտ էլ եղել է նիւթական ապահովութեան խնդիրը։ Բարոյական վարձատրութեան, անկեղծ սիրոյ պարզ արտայայտութիւնն ես երբէք չեմ տեսել հայ գրողի, հայ գործչի յոբելեանի մէջ։ Ուղերձները, ճառերը, հեռագիրները, ընծաները և այլն ոչինչ պիտի համարել այդ օրը յոբելեարի համար։ Ես չեմ ընդունում և չեմ համակրում, երբ հայ գործչին նստեցնում են յոբելեանական հանդէսի մէջտեղ և օգնութեան ձեռք մեկնում հային։ Յոբելեանի օրը յոբելեարին տուածը ես մուրացկանութիւն եմ համարում։ Մեզ մօտ տօնվել են Ղազ. Աղայեանի, Պերճ Պռօշեանի, Լէօի, Տ. Նազարեանի, Վրոյրի, տիկ. Սիրանոյշի յոբելեանները միայն և միայն նիւթապէս այդ գործիչներին ապահովելու նպատակով։ Ես սրտանց համակրում եմ, երբ գրողը վարձատրվում է նախ քան յոբելեանը, ես սիրում եմ այն ժողովրդին, երբ գիտակցաբար և արժանավայել կերպով իր ժամանակին գնահատում է իր գործիչներին։ Ես հասկանում եմ, երբ Տօլստոյի անունով մուզէում են շինում կամ դպրոցների և ընթերցարանների ցանցով պատում Ռուսաստանի խաւար անկիւնները։ Ինձ համար հասկանալի է, երբ լեհ ժողովուրդը անհագին կալուածք է նուիրում իր տաղանդաւոր գրողին, իր Սենկեվիչին։ Օտար ժողովուրդը սովոր է գնահատել իր գրողին նրա կենդանութեան օրօք, նրա գործունէութեան ժամանակ։ Իսկ մենք, հայերս, լաւ ճառեր արտասանել և լաւ թաղել գիտենք մեր գործիչներին։ Ժամանակ է, որ հայն էլ հետևի այդ գեղեցիկ օրինակին, ժամանակ է իւրացնել օտարների այդ համակրելի քայլը։ Եւ մենք դեռ կուլտուրական ազգ ենք կոչվում...

— Մինչև մի-երկու տարին կը տօնվի նաև ձեր յոբելեանը. և եթէ այդ օրվայ համար դրամ հաւաքելու լինեն, մի՞թէ կը հրաժարվէք այդ դրամը ընդունելուց,—հարցրի ես։

— Այո՛, ես կը հրաժարվեմ...

Այնուհետև խօսք եղաւ Իւրիյ Վեսելօվսկու նորերս հրատարակած «О русскомъ вліяніи въ современной армянской литературѣ» գրքոյկի մասին։

Ինչպէս գիտէ ընթերցողը, մեզ քաջածանօթ պ. Վեսելօվսկին իր այդ գրքոյկով գալիս է մի աւելորդ անգամ ևս ցոյց տալու ռուս հասարակութեան, որ հայերը, հայ գրողները համարեա միշտ խոշոր ազդեցութիւն են ունեցել ռուս գրողներից. Նրանք՝ զուրկ որևէ սեպարատիստական ձգտումներից՝ միշտ էլ հետևել են գիտութեան, գրականութեան, միշտ էլ կուլտուրապէս աշխատել են իրանց հարևան ռուս ազգի հետ։ Այդ գրքոյկը դասախօսութիւնների մի փոքրիկ ժողովածու է, որ պ. Վեսելօվսկի անցեալ 1908 թ. կարդացել է Պետերբուրգի հայկական կրուժօկում և Բաքւում։ Այդ գրքոյկի մէջ հայ գրողներից Շահազիզի, Լէօի, Ծատուրեանի, Յովհաննիսեանի, Թումանեանի, Ահարոնեանի, Շիրվանզադէի կարծիքները այն մասին, թէ որչափ ռուս գրողները ազդել են իրանց վրա,—բաւական ուշագրաւ են։

Ես վերցրի այդ գրքոյկը կարդալու համար։

Մեր տեսակցութիւնը, որ տևեց մի ժամից աւելի, բաւական քաղցր տպաւորութիւն թողեց ինձ վրա։

— Ցանկանում եմ կատարեալ առողջութիւն,—վերջին անգամ ասացի բանաստեղծ Ծատուրեանին, վշտի երգչին...

Ոսկու-Ջօն

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Կորիւն վարդապետի գործը

Գանձակի հայ-լուսաւորչական վիճակի յաջորդ Կորիւն վարդապետը (Վահան Սահակեանց, ծն. 14 յունվարի 1867 թւի Վան քաղաքում, ռուսահպատակ 1896 թւից) մեղադրվում է նրանում, որ 1905 թւին Գանձակ քաղաքում, որ յայտարարված է զինւորական դրութեան մէջ, մտաւ իբրև մասնակցող մի համախմբման մէջ, որ իրան անուանում է հայկական յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութիւն, որ նախօրօք նրա՝ Կորիւն վարդապետի համար իր գործունէութեան նպատակ էր դրել բռնութեամբ տապալել Ռուսաստանի պետական կազմը և հաստատել ֆեդերատիվ հանրապետութիւն Անդրկովկասի աւտոնոմ կառավարութեամբ և առանձին պարլամենտով, պատասխանատու մինիստրութիւնով և ժողովրդական առանձին միլիցիայով. նա ի կատար ածելու համար վերոյիշեալ նպատակը, իբրև Այգեստանի կենտրոնական կոմիտէտի նախագահ, զէնք ձեռք բերեց և պահում էր ռազմիկ «դրուժինա», որ պատրաստված էր գործելու հայ-ազգաբնակութեան՝ մտադրվող զինված ապստամբութեան ժամանակ վերոյիշեալ նպատակով, որպիսի յանցանքը նախատեսված է քր. պատժ. 102-րդ յօդուածով։

Մարտի 3-ին, երկու օրվայ քննութիւնից յետոյ, ցերեկվայ ժամը 4 և կէսին, կովկասեան զինւորական-նահանգական դատարանը Կորիւն վարդապետին մեղաւոր ճանաչեց և, զրկելով նրան հոգևոր կոչումից և բոլոր թէ անձնական և թէ ստացուածքային իրաւունքներից ու արտօնութիւններից, դատապարտեց ութ տարով տաժանակիր աշխատանքների։

Դատավճիռը վերջնական ձևով կը յայտարարվի մարտի 5-ին, առաւօտեան ժամը 10-ին։ («К.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ժողովրդական համալսարանների ընկերութեան վարչութիւնը Գոգոլի ծննդեան յոբելեանը տօնելու համար մշակել է հետևեալ ծրագիրը. 1) կարդալ Գոգոլի կենսագրութիւնը, 2) լուսաբանել նրա խարակտէրիստիկան, 3) երկու կտոր կարդալ «Мертвыя души» գրուածքից։ Խարակտէրիստիկան կազմելու վրա աշխատում է Ն. Երմօլայեվը, իսկ կարդալու են Սամարսկի, Դօլուխանեան, Քափանակեան, Եավօրսկայա և Այարով։ Բացի դրանից ընթերցանութիւններ են լինելու նաև տեղական լեզուներով, որի համար էլ թոյլտւութիւն է խնդրված գեներալ-նահանգապետից։

◆ Նկատի առնելով որ եղանակները տաքանում են և երկիւղ կարող է լինել խօլերայի երևալու առիթով, բժշկական-սանիտարական մարմնի տեսուչ բժիշկ Ստեփանեան այս օրերս մի խորհրդակցութիւն է կազմելու սանիտարական մասնաժողովի մասնակցութեամբ այդ խնդրի վերաբերեալ հարցերը քննելու համար։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Ս. Զրէլայեվը զեկուցագիր է ներկայացրել Թիֆլիսի քաղաքային վարչութեան մի ընդարձակ շուկայ հաստատելու մասին Մուխրանեան կամուրջի մօտ։ Քաղաքային վարչութիւնը հաւանել է զեկուցագիրը և որոշել է ներկայացնել դումայի քննութեան։

◆ Փետրվարի 28 ից «Անկախ Մամուլի» նախկին խմբագիր Արամ Տէր-Գրիգորեանը դատարանի վճռով բանտ է նստել մի ամսով։

◆ Քաղաքային վարչութիւնը արդէն կարգադրել է, որ մարտի 19-ից կը սկսվեն ժողովրդական ներկայացումները Զուբալօվի ժողովրդական տանը ռուսերէն և տեղական լեզուներով։ Հայկական ներկայացումներին յատկացված է շաբաթական մի օր։ Քաղաքային վարչութիւնը դիմել է Հայոց Դրամատիկական Ընկերութեան վարչութեանը, յանձնելով նրան հայկական ժողովրդական ներկայացումների գործը։ Դրամատիկ. Ընկ. վարչութիւնը ևս իր կողմից այդ գործը առաջարկել է հայ թատերասէրների խմբակցութեանը։ Առաջին հանդիսաւոր ներկայացումը կայանալու է մարտի 19-ին։ Դրվելու է երեք պիէս՝ ռուսերէն, հայերէն և վրացերէն։

◆ Հարց է յարուցված ի մի միացնել ժողովրդական ընթերցանութիւնների և ժողովրդական համալսարանների ընկերութիւնները։

◆ Մարտի 2-ին Օրբրօվսկայա, Լօտկինսկայա և Իւրիէվսկայա փողոցներում խուզարկութիւն կատարելու ժամանակ ձերբակալվել են 25 պարապ-սարապ մարդիկ։

◆ Ստացանք՝ 1) «Հասկեր» մանկական ամսագրի փետրվարի համարը, որ տպագրված է մաքուր և գեղեցիկ պատկերներով, 2) «Գիւղացին և Արջը» ժողովրդական հէքիաթ, Աթ. Խնկոյեանի, հրատ. «Հասկեր» ամսագրի, № 3, ձրի յաւելուած, 3) «Արցունքի Հովիտէն», պատկերներ թիւրքահայոց կեանքէն, գրեց Հ. Տ. Ս. Տէվկանց, Թիֆլիս 1909 թ., գինն է 20 կ., 4) «Եղիա Տէմիրճիպաշեան», Լ. Եսաճանեանի, Կ. Պօլիս 1909 թ., թիւ 10 «Ազատ Մատենաշարի»։

◆ Անօնիմ ընկերութեան կենտրոնական վարչութեան ներկայացուցիչ ինժենէր Լէբօնի և Թիֆլիսի էլեկտրաքարշի ծառայողների միջև բանակցութիւնները շարունակվում են գործերը կարգաւորելու մասին։ Մի քանի կէտերի վերաբերութեամբ համաձայնութիւն արդէն կայացել է։

◆ ԵԿԱՏԵՐԻՆԵՆՖԵԼԴԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 27-ին այստեղ պատահեց մի շատ ցաւալի դէպք. առաւօտեան ժամը 6-ին Եկատերինենֆելդի օմնիբուսը Սանդար կայարանից գալիս ճանապարհորդներով, որոնց մէջ լինում է իշխան Ջափարիձէի որդի Ալէքսանդրը, որը նստած է լինում իր բերդանկա սիստեմի հրացանով, «Թթու-Ջուր» կոչված տեղում Ալէքսանդրը վայր է գալիս և յանկարծ անզգուշութիւնից հրացանը պայթում է և ծանր վիրաւորում պատանուն փորից, որը մի քանի ժամից յետոյ մեռնում է։ Ալէքսանդր Ջափարիձէն 19 տարեկան մի պատանի էր»։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Քաղաքային վարչութեան սանիտարական բիւրօյի տուած տեղեկութեան համաձայն, 1908 թւի ընթացքում Բագւում մեռել են 4011 հոգի, այսինքն ամեն մի 1000 հոգուն ընկնում է 17,8 մահացութեան դէպք։ Մահվան գլխաւոր պատճառները հետևեալներն են. վարակիչ հիւանդութիւններ՝ 501, ի թիւս որոնց խօլերայից՝ 74, թոքախտից 399, ստամոքսի և աղիքների հիւանդութիւնից՝ 170, մարսողական գործարանների հիւանդութիւնից՝ 824, շնչառութեան գործարաններից՝ 487, դժբաղդ պատահարներից՝ 83, անձնասպանութեան դէպքեր եղել են՝ 31 և սպանութիւններ՝ 161։

◆ Զուբալօվի գործադուլարար բանւորները փետրվարի 25-ից հեռացված են նաւթահանքից։ Աշխատանքները առ այժմ դադարեցված են, մինչև որ բանւորների կազմը կը լրացվի։ («Баку»)

ԼՈՒՐԵՐ ԳԱՆՁԱԿԻՑ

◆ Մարտի 1-ին, նախաձեռնութեամբ բժ. Վ. Աղբէկեանի, մի խումբ երիտասարդներ ս. Լուսաւորիչ եկեղ. խուռն ժամւորների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարեցին Աշուղ-Ջիւանու համար։ Խօսեց ուսուցիչ Յ. Ե.։ Ժամւորների առաջ դնելով հայկական կեանքում աշուղների կատարած դերը և վերջը կանգ առնելով Աշուղ-Ջիւանու ու նրա՝ հայ ազգին մատուցած ծառայութեան վրա, վերջացրեց ճառը հետևեալ խօսքերով. «Մենք կորցրինք մի աշուղ, որի քնարը երգում էր սէր և վիշտ և խօսք արդար»։ Ժամւորները ցրվեցին տխուր տպաւորութեան տակ։

◆ Մարտի 1-ին տեղիս ակումբի դահլիճում նշանակված էր Կ. Հ. Բ. Ընկ. ճիւղի անդամների ընդհանուր երկրորդ ժողովը, որի զբաղմունքը պիտի լինէր 1909 թ. նախահաշւի վաւերացնելն և հրաժարված վարչութեան անդամների տեղը նորերի ընտրելը։ Չը նայած այս անգամ վարչութիւնը յայտարարութիւններ էր ցրել, բայց և այնպէս անդամների $1/3$-ը չէր եկել, որի պատճառով վարչութեան անդամների ընտրութիւնը թողնվեց երրորդ ժողովին, իսկ նախահաշւը կանոնադրութեան համաձայն վաւերացվեց։ Ցաւելով պէտք է ասել, որ Կ. Հ. Բ. Ը. ճիւղը փակման վտանգին է ենթարկված, շնորհիւ մեր բանիմաց տարրի և անդամների անտարբերութեան։ Գալով յարգելի անդամներին՝ կասեմ. կամ գրաւոր յայտնել վարչութեանը, որ իրանք անդամ չեն համարում իրանց, խաչ դնելով ճիւղի վրա, կամ գործի դիմեն, որ ուրիշները չասեն, որ Գանձակը անշնորհք գտնվեց մի անհրաժեշտ հիմնարկութիւն պահել։

◆ Երկու շաբաթ է, ինչ Յ. Ազարարը սկսել է քարոզել մեր եկեղեցիներում։ Յ. Ազարարի քարոզները մարդկանց մեծ բազմութիւն են գրաւում շնորհիւ այն բանի, որ այդ քարոզները տպաւորիչ և սննդալի են։ Կը խնդրէինք պ. Ազարարին, որ միայն ս. Յովհ. եկեղ. չը սահմանափակվէր, այլ ս. Լուսաւորիչ եկեղ. էլ բաժին տար իր քարոզներից։

Սարգօ

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հոգևոր համերգ

Հոգևոր համերգը, որ տրվեց երեքշաբթի, մարտի 3-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում, բաղկացած էր երեք բաժնից՝ ուղղափառ դաւանութեան, կաթոլիկական և հայ-լուսաւորչական։

Բացի խմբական երգերից տեղի ունեցան նաև մի քանի առանձին երգասացութիւններ երաժշտական գործիքների զուգակցութեամբ, օրինակ դաշնամուրի, երգեհոնի և ջութակի։

Ռուսական երգեցիկ խմբերի ղեկավարողն էր Դանօվսկին, վրացականի՝ Սուլխանօվ, հայկականի՝ հայր Կոմիտաս, կաթոլիկականի՝ Սվենցիցկին։

Երգեցիկ խմբերը ունէին լաւ ձայներ և պատրաստվել էին բարեխղճօրէն, բայց նրանց պակասում էր գեղարուեստական կատարումը, ուստի համերգը չէր թողնում հոգևոր կոնցերտներին յատուկ վեհութիւնը և տպաւորիչ ազդեցութիւնը։

Հայկական բաժնում երգվեցին «Մարմին տէրունական», «Հայր Մեր» և «Սուրբ-Սուրբ» բաւական ներդաշնակ և սիրով։ Հասարակութիւնը հաւանեց։ Եթէ երգասացութեան մէջ մի քանի տեղերում մտցված լինէին յորդոր և շաղկապիչ կտորներ, տպաւորութիւնը աւելի մեծ կը լինէր և եղանակները աւելի շօշափելի ու ըմբռնելի. իսկ դանդաղ և ընդհատ երգելուց եղանակը տարրալուծվում է միայն առանձին-առանձին նոտաների։

Առանձին կատարողներից մեծ տպաւորութիւն գործեց օրիորդ Ջնելաձէի նուագածութիւնը ջութակի վրա։ Օրիորդը հանդէս եկաւ երկու անգամ Ave Maria քառախմբում և Andante Religioso-ում առանձին։ Օրիորդի խաղը արտայայտիչ է, խելացի, զգացված և թեմայի ոգով ներշնչված։ Ջութակի ձայները մաքուր են, գեղեցիկ, փաղաքշող և փայփայող։ Օրիորդի նուագածութիւնը արժանացաւ երկարատև աղմկալի ծափահարութիւնների։

Համերգին մասնակցում էր նաև տիկին Սպենդիարեան, որ երգեց Բեթհօվէնի Pieta Signore և Die Ehre Gottes aus der Natur. Աւելի աջող էր վերջինի կատարումը։

Համերգը գրաւել էր մեծ բազմութիւն։ Թատրոնը համարեա թէ լիքն էր։ Ներկայ էին զանազան ազգութիւնների ներկայացուցիչներ։

Սիրող

—

Ախալցխա, 1 մարտի

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան տեղական բաժնի օգտին, շաբաթ, փետրվարի 28-ին, քաղաքային հասարակական ժողովարանի դահլիճում մի խումբ սիրողներ, տ. Մամիկոնեանի մասնակցութեամբ, տուին մի ներկայացում հետևեալ ծրագրով. Ե. Տէր-Գրիգորեանի «Դամոկլեան Սուր» դրաման 2 գործ. և «Ադամ և Եւա» կատակերգութիւն 2 գործ. և քառաձայն երգեր։ Այս ներկայացումը տրվելու էր Բարեկենդանի հինգշաբթին, փետրվարի 5-ին, և արդէն աֆիշաներն էլ ցրել էին, սակայն ինչ-ինչ պատճառներով չը կայացաւ և յետաձգվեց այսօրվայ։

Ներկայացումը ընդհանրապէս աջող անցաւ։ Սկզբում քառաձայն երկսեռ խումբը, Պօղոս Տէր-Կարապետեանի ղեկավարութեամբ, երգեց ռուսերէն լեզուով «Закрылось сольце», «Սարերի Հովին», «Սարէն կուգայ» և այլն հայերէն երգերը։ Այս բաժնում տ. Մամիկոնեանը արտասանեց մի ռուսերէն ոտանաւոր, որը հասարակութեան կողմից խուռն ծափահարութիւններ խլեց. տիկինն ապա ստիպվեց երկրորդ և երրորդ անգամ արտասանել ռուսերէն ոտանաւորներ։ Ապա խաղացվեց «Դամոկլեան Սուր» դրաման։ Այստեղ տիկին Մամիկոնեան Մարիի դերում մտածված ու գեղեցիկ խաղով գրաւեց հասարակութեան ուշքը։ Լաւ էր նոյնպէս օրիորդ Գրիգորեանը թոքախտաւոր Աննայի դերում։

«Ադամ և Եւա» կատակերգութիւնն էլ անցաւ բաւականին կենդանի։ Օրիորդ Գալչեանը և պ. Ա. Ներսիսեանը բաւականին աշխոյժով ու մտածված խաղացին գիւղացի կնոջ ու մարդու դերերը։ Այսպէս ընդհանրապէս լաւ անցաւ ներկայացումը և գոհացրեց դահլիճի լիքը երկսեռ հանդիսականներին։ Համաձայն ծրագրի՝ ներկայացման վերջը լինելու էր մելօ-դէկլամացիա, որտեղ տիկին Մամիկոնեանը կարդալու էր ռուսերէն «Умирающій лебедъ»-ը, իսկ պ. Մակարեանը՝ Պարոնեանի «Ջէյլիից» կտորներ, սակայն, ինչպէս լսեցինք, դաշնամուր նուագողներ չը գտնելով, այդ բանը չը կայացաւ։ Մուտք եղաւ մօտ 150 րուբլի։

Հանդիսական

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արեգակը և երկարակեցութիւնը.—Արեգակը, ինչպէս ապացուցին վերջին գիտական փորձերը, անմիջական ազդեցութիւն ունի կեանքի երկարատևութեան վրա։ Այն տեղերում, ուր արեգակնային օրերն աւելի են տարվայ մէջ, կեանքի տևողութեան միջին թիւը աւելի է։ Այսպէս, օրինակ, Շվէյցարիայի Լուգանօյի մօտակայքում, ուր տարվայ մէջ 830 արեգակնային օր է հաշվվում, 100 տարեկան ծերեր աւելի շատ են հանդիպում, քան թէ ուրիշ տեղերում։ Տեսսինայի շրջանում, որը նոյնպէս բարեյաջող պայմանների մէջ է արեգակի լոյսի կողմից, 1904 թւի ազգագրութիւնը ցոյց տուեց, որ 149,385 հոգի ազգաբնակութեան վրա ընկնում է 6,422 հոգի հօթանասնամեայ ծերեր, այսինքն 4,4% և 1 տոկոս ութսունամեաներ, որ շատ բարձր տոկոս է համարվում։ Տեսսինայից գաղթողները սովորաբար 50 տարուց յետոյ վերադառնում են այնտեղ իրանց դարը երկարացնելու նպատակով։

Միլիարդատիրոջ գրադարանը.—Ամերիկացի միլիարդատէր Մորգանը, որ ընդհանրապէս զբաղված է ժողովածուներ կազմելով, Նիւ-Եօրկում յատուկ մարմարաշէն պալատում հիմնել է մի շատ հարուստ գրադարան։ Վերածնութեան դարաշրջանի ժամանակներից սկսած բիբլիոգրաֆիական և ձեռագիր այնպիսի հազւագիւտ ժողովածուներ չեն եղել, ինչպիսին որ այժմ Մորգանի գրքերի թանգարանում կայ։ Նրա կազմութեան համար Մորգանը ոչ միայն հսկայական գումարներ է ծախսել, այլև ահագին ժամանակ է գործ դրել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Բայազէտ, 13 փետրվարի

Ախալցխայի հայոց ծխական ուսումնարանների նախկին տեսուչ Յ. Իւսուֆեան «Գործի» № 26-ում, խօսելով տեղիս գր.-ընթերցարանի մասին, կամեցել է ստուեր ձգել Կ. Հ. Բ. Ը. տեղիս ճիւղի վրա։ Պարոնի յօդուածը մի քիչ արժէք կունենար, եթէ նա վերջում չը կպչէր «Մշակին» և հայհոյանքներ (ստորաքարշ, հացկատակ, գրչավաճառ) չը թափէր նրա թղթակիցների գլխին։ Թողնելով Կ. Հ. Բ. Ը. տեղիս վարչութեանը ինքն իրան պաշտպանել, ես, իբրև «Մշակի» թղթակից, իմ կողմից կասեմ այն, որ Յ. Իւսուֆեան իր բուռն սլաքները կամեցել է ուղղել «Մշակի» № 290-ի (1908 թ.) թղթակցութեանս դէմ, որտեղ արձանագրված են նրա ցնդաբանութիւնները՝ Կ. Հ. Բ. Ընկերութեան հասցէին ուղղված։

Որպէսզի ընթերցողներն աւելի լաւ ծանօթանան Յ. Իւսուֆեանի անձնաւորութեանը, կարևոր եմ համարում յիշել, որ նա Բագւում երկար ծխալուց յետոյ մի վագօն նաւթ ուղարկից այստեղ, բայց գործը անաջող դուրս եկաւ, փտավեց ու յետ կանգնեց։ Ապա «վառ յոյսերով» մտաւ Նոր-Բայազէտ և ձգնեց քաղաքագլխի պաշտօնը ստանձնել, այդ ևս անաջող։ Յետոյ «ի սէր ժողովրդի շահերի» ալիւրի պահեստ բաց արեց, դարձեալ անաջող, քանի որ գտնվեցին անհատ-վաճառականներ, որոնք աւելի էժան ալիւր բաց թողին ժողովրդին, քան պ. Իւսուֆեանն էր, ուստի խաբկ տուեց վաճառականական ասպարէզից։ Վերջում՝ մտածեց մանկավարժական ասպարէզ մանել, գնաց Ախալցխա տեսուչ, որտեղ մեծ աղմուկ և իրարանցում գցելով ուսուցչական խմբի մէջ՝ խառնեց բոլորին և ինքը խաբկ տուեց։ Այժմ այդ բոլորից չը խրատված այստեղ ևս ցանկանում է մաքեր պղտորել, վարկաբեկել այս ընկերութեան, այն հիմնարկութեան, սրան անուանարկել, նրան հայհոյել և այլն։ Բայց մենք չենք վնասվի, նշանակութիւն չը տալով նրա անարժէք խօսքերին, այլ անսայթաք առաջ կը գնանք մեր ընդգծած ուղիով, որտեղ անսասան կերպով ծածանում է «Մշակի» դրօշակը։

Ֆարս

—

Թիֆլիս, 3 մարտի

Հայոց Ազգագրական Ընկերութեան խորհուրդը խորին շնորհակալութիւն է յայտնում հետևեալ անձնաւորութիւններին, որոնք հաճեցին նուիրել ընկերութեան թանգարան-գրադարանին հնագիտական իրեր և գրքեր։

Իշխանուհի Սօֆիա Երկայնաբազուկ-Արղութեանից՝ Սանահինում գտնված 12 բրօնզէ իր և 21 կաւէ աման, տ. Ս. Թումասից մի փական և մի պղնձէ քանդակազարդ բաժակ, պ. Ա. Եզեկեանից՝ Արմաւիրում գտնված քարէ թռչուն և քարէ կացին, պ. Ստ. Ղորղանեանից՝ մի բրօնզէ զանգակ։

Տ. Դարիա Յովհաննիսեանից՝ դարձեալ 25 կտոր գրքեր և լրագիրներ, արժ. Յ. ք. Միքիժանեանից՝ «Մուրճ» 1891—7 թ. բոլոր գրքերը պ. Պ. Զաքարեանից՝ 4 կտոր գիրք, պ. Յ. Զամպլրաշեանից 1893 թ. «Բազմավէպ» և երկու կտոր գիրք, պ. Գ. Խոյաթեանից մէկ գիրք, պ. Ն. Թոփչեանից՝ մէկ գիրք։

Խորհուրդս խորին շնորհակալութիւն է յայտնում նաև տ. Հ. Մարտիրոսեանին՝ նրա նուիրած 2 գիւմին աթոռների և մի ընդօրինակող ժամացի համար, ինչպէս և պ. Եփրեմ Ծատուրեանին՝ 2 յամպերի համար։

Նախագահ՝ Ալ. Մելիք-Ազարեան

—

Լազօղազ, 2 փետրվարի

Խոնարհաբար խնդրում ենք տպագրել մեր այս նամակը «Մշակ» լրագրում։

«Մշակի» № 20-ում տպված է պ. Խ.-ի նամակը Լազօղազից գրած, որի մէջ նա սխալ տեղեկութիւններ է հաղորդում և մոլորեցնում հասարակութեան։ Այս մասին վարչութիւնս պատիւ ունի բացատրել հետևեալը.

Յունվարի 18-ին ներկայացում տրվեց Կ. Հ. Բ. Ը. Լազօղազի ճիւղի օգտին։ Զիջանելով մի քանի անձանց խնդրին, վարչութիւնս 4½ ձայնով (որոնց թւում և քահանան և ուսուցիչը, որոնց դէմ յարձակվում է նամակագիրը) իրաւունք տուեց բուֆէտ սարքելու, ինչպէս միշտ եղել է անցեալում։

Բուֆէտը ընդունված է ամեն տեղ, և Թղթակիցն իրաւունք չունի վիրաւորել ամբողջ հասարակութիւնը, որ իբր թէ գնում է «գինեմոլութեան համար»։ Հոգաբարձու Յովհաննէս Թումեանցը դուրս գալով իր իրաւունքի սահմաններից՝ միջամտեց վարչութեանս որոշման մէջ, որ նա իրաւունք չունէր, և սկսեց ահագին աղմուկ բարձրացնել, խռովութիւն գցելով ժողովրդի մէջ. նա դրդում էր տոմսակները վերադարձնել, եթէ բուֆէտ լինի։

Տեսնելով այս, վարչութիւնս անախորժութիւնից խուսափելու նպատակով արգելեց բուֆէտ, ուրեմն սուտ է ասում Թղթակիցը, որ իբր թէ բուֆէտ կար և դրա պատճառով տոմսակները վերադարձրին։

Գինեվաճառ Թումեանցը ինքն առաջինն եղաւ Լագօդաղում բուֆէտ սարքող։ Անցեալ ներկայացումներին բուֆէտ եղել է միշտ հէնց նրա կարգադրութեամբ։ Հոգաբարձութիւնը ոչ մի որոշում չէ կայացրել բուֆէտն արգելելու մասին, և թէկուզ կայացնէր էլ՝ նրա որոշումը պարտադիր չէր կարող լինել վարչութեանս համար։ Եթէ Թումեանցը այս անգամ հակառակորդ դուրս եկաւ, պատճառն այն էր, որ նրա կինը չէր մասնակցում, և նա կամեցաւ այդպիսով վրէժ լուծել և փչացնել ներկայացմանը։

Ինչ վերաբերում է նրան, որ իբր թէ Բ. քահ. Սուքիասեանի անտակտ վարվելու պատճառով մեր ճիւղի անդամները հեռանում են, կասենք, որ դա բոլորովին սուտ է. ոչ ոք չէ հեռացել, բացի տիկ. Թումեանցից, որը կամենում էր միահեծան թագաւորել և ամենքս կատարէինք նրա կապրիզները։ Անդամների թիւը մի տարվայ ընթացքում 15-ից դարձաւ 30։

Յ. Թումեանցը իր անհանգիստ բնաւորութեան պատճառով առաջին անգամ չէ որ խառնակութիւն է գցում ժողովրդի մէջ։ Նա պահանջում է, որ ամենքը հլու-հնազանդութեամբ կատարեն իր և իր կնոջ կապրիզները։ Նա արհամարհում է թէ հոգաբարձուներին, թէ ուսուցիչներին և թէ վարչութեանս անդամներին և կամենում է ամեն բանի մէջ խառնվել և իր «ես ու կապրիզը» առաջ քշել։

Նախագահ Բագ. քահ. Սուքիասեան
Անդամներ՝ Մ. Եարեան, Ա. Բալահայրումեան
Անդամ-քարտ. Յ. Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

—

Կ. Պօլսի հայ մամուլը և հասարակական կարծիքը սկսել է քննադատական լեզու բանեցնել հայոց ազգային երեսփոխանական ժողովի և պատրիարքարանի գործունէութեան դէմ։

«Բիւզանդիոն» թերթը մի մեծ առաջնորդող յօդուած նուիրելով այդ գործունէութեանը՝ «Վարչական գործերուն ընթացքը» վերնագրով, ցոյց տալով որ պատրիարքարանին կից գործող ժողովները՝ Քաղաքական և Կրօնական՝ դատապարտված են ամլութեան, հետևեալ կարծիքն է յայտնում ազգային ժողովի գործունէութեան մասին.

Գալով ազգ. ժողովին, հոն վասն զի բոլոր գործողութիւնք հրապարակային են, խորհրդակցութիւնք ամենուն դիտողութեան ենթակայ, պատկերն աւելի ցաւալի է։ Պէտք չէ գաղտնիք մը ըլլայ այլ ևս թէ ընտրուած երեսփոխանները կըրնան շատ պատուական մարդիկ ըլլալ, կրնան հերոսներ, նահատակներ, և այլ չեմ գիտեր ինչեր ըլլալ, սակայն երբեք ազգին ներկայացուցիչներն և անոր կարծիքին թարգմանները։ Այն աթոռներուն վրայ, ուր երբեմն բազմած են Ստեփան Արսլանեաններ, Օտեաններ, Ռուսինեաններ, Ազաթօններ, Մերեէմ-Գուլեններ, Պէրպէրեաններ, Թիրեաքեաններ և այլ ասոնց նման անձնաւորութիւններ, որոնք հայոց երեսփոխանական ժողովին վարկն ու պատիւը բարձրացուցած են, այսօր տեսնելով անձեր, որոնք ոչ ժողովի մը պատկառանքը պահել գիտեն և ոչ ալ անոր պատիւը, որոնք չեն գիտեր նոյն իսկ իրենց բերնէն դուրս ելած բառերուն նշանակութիւնն և կարևորութիւնը, և երբ հերոսական շարժում ամենատարրական կենցաղագիտութեան պակասով մը կը յանդգնին թքնել այնպիսի անձանց արժանիքներուն վրայ, որոնց ոտքին փոշին ալ ըլլալու արժանիքը չունին, մարդուն լալը կուգայ և... միանգամայն իրաւունք տալ անոնց, որոնք շարունակ կը բացակային... անշուշտ այս տեսակ մարդոց հետ աթոռակից չգտնուելու նախազգուշութեամբ։

Ասկէ զատ երեսփոխաններէ ոմանք կը գանգատին քանի մը երեսփոխաններու բռնած ընթացքէն որ պարզապէս խաբանարար կը համարեն, և ասոր համար ժողովի չեն գար։ Եւ իրաւամբ անհանդուրժելի է մանկապարտէզին մանուկներու դասակարգն անցնիլ, լսելու համար երեսփոխանի մը քարոզները, խիստ շեշտով մը արտասանուած, կարծես թէ իր դիմացը գտնուէին մանուկներ, որոնց ուսուցիչ կարգուած է... անշուշտ ինքնակոչ կերպով. կամ երբ դիւանական գործողութիւն ամեն նիստին ունկնդրել ժամերով՝ առատ ժամանակ ունեցող երեսփոխանի մը դէզերով նամակներն, որոնք կերևի ժամանակ անցնելու համար սովորութիւն ըրած է դիւանին ուղղել ամեն օր, անհեթեթ, անկապ և անիմաստ առաջարկներով լեցուն։

Եթէ այս ողորմելի, ապարդիւն և կատակերգական գործունէութիւնը ցոյց տալու համար է որ կը գումարուին մեր երեսփոխանները, մեղք է թէ կորսուած ժամանակին և թէ ազգին դրամներուն, որոնք պարապ տեղը կը ծախսուին։ Տասն և հինգ նիստերու մէջ այս երեսփ. ժողովը ինչ ըրաւ։ Պատրիարք մը ընտրեց և ուրիշ ոչինչ։ Ընտրութիւնն ալ չէ թէ ինքն ըրաւ, այլ ազգը։ Անիկա արդէն ընտրեալ մըն էր, և կատարուած գործողութիւնը լոկ ձևակերպութիւն մըն էր։ Ասկէ դուրս բան մը մի փնտռէք, խօսք և դարձեալ խօսք, և պայմանով որ այդ խօսքերը մեծամասնութեամբ պարապ խօսքեր ըլլան։

Այդ պարապ խօսքերուն համար մեղք է այս ազգին, որ դրամական մեծ զոհողութիւններ ընէ։ Հաշիւ եղած է որ պատրիարքարանի պարապ սնտուկին իւրաքանչիւր նիստ կարժէ 10—11 օսմ. ոսկի, ինչ որ շատ գրամ է բաղդատմամբ ճղճիմ արդիւնքին, զոր մեր երեսփոխանութիւնը ցոյց կուտայ։ Այս հաշուով մեր երեսփ. ժողովը ազգին սնտուկին արժած է՝ 15 ոսկի, առանց նոյնիսկ 150 փարայի օգուտ մը ունենալու։ Երեսփոխանութեան առաջին պարտաւորութիւններէն մէկն է և նոյն իսկ նստաշրջանին բացման առաջին օրակարգը՝ պատրիարքարանի բիւդջէին քուէարկումը, որուն ակնարկութիւնն իսկ եղած չէ ժողովին մէջ, մինչ անդին ամենէն ողորմելի խնդիրները կը ծեծուին ժամերով ժողովին մէջ։ Ա՞յս պէտք էր ըլլար ազատութեան առաջին շրջանին երեսփ. ժողովին և Իզմիրլեանի նախագահած վարչութեան վիճակը. մեղք չէ՞ այս տառապած ժողովուրդին որ ճար կը փնտռէ փոխանակ ճառերու և որ այսօր հացի տեղ խօսքերով բաւականանալու կը ստիպուի։

Մեղք ու հազար անգամ մեղք։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ Պետական Դումայի նախագահ Խոմեակովը բաղդ ունեցաւ ունկընդրութեան ընդունվել Թագաւոր Կայսրից։ Ունկնդրութիւնը տևեց մօտ երկու ժամ։ Խոմեակովը զեկուցում տուեց Դումայի աշխատանքների ընթացքի մասին. զեկուցման ժամանակ Կայսրը արժանացրեց նրան ողորմած հարց ու փորձի։

Ստատս-սեկրէտար Ստօլիպինի առողջութիւնը լաւացաւ։ Բժիշկների վկայութեամբ հիւանդութիւնը այլևս վտանգ չէ սպառնում։

Երեկոյեան ժամը 11-ին Վարշավայի երկաթուղով Բերլին մեկնեց Թիւրքական արտաքին գործերի մինիստր Րիֆաթ-փաշան։

Մայրաքաղաքում օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 7, մեռան 3 հոգի։

ԲԱԳՈՒ։ Ակցիզային վերահսկիչ Խանադեանը տէրրօրիստների Բագուի խմբակից ստացաւ երկու սպառնական նամակ 2500 րուբլու պահանջով։ Խանադեանի բնակարանի վրա ոստիկանութիւնը հսկողութիւն նշանակեց և ձերբակալեց փողերի համար եկած երկու դրամաշորթներին։

Ռոմանիում «Մոսկվայի ընկերութեան» նաւթահանքում, բուրօվօյ վարպետ Սարգսեանի բնակարանը մտաւ մի անյայտ մարդ և ներկայացրեց փախստական սիբիրցիների «Знамія» խմբակի նամակը 500 րուբլի պահանջով քաղաքական յանցաւորներին ազատելու նպատակով տէրրօրներ կատարելու համար։ Սարգսեանի կինը աղաղակ բարձրացրեց։ Անյայտը փախաւ, ձերբակալվեց և բանտարկվեց ոստիկանատանը, բայց երեկոյեան քանդեց պատը և փախաւ։

ՇՈՒԼԱՎԵՐ։ Բօրչալուի գաւառապետը ոչնչացրեց երեք գաւառներում գործող աւազակախմբերին։ Հրացանաձգութեան ժամանակ աւազակապետը սպանվեց, վիրաւորվեցին աւազակներից երկուսը։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանի խորհուրդը ոստիկանութեան պատուէրի համաձայն արձակեց 86 ուսանողների, իրաւունք տալով նրանց վերընդունվել համալսարան սոսկ այն դէպքում, երբ ստորագրութիւն կը տան թէ կայցելեն բացառապէս կրթական պարապմունքների համար։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Ծովային հիւանդանոցի քննութիւնից երևաց, որ քաղաքալին ջրանցքի ջուրը վարակված է խօլերայի վիբրիօններով։

ԼՕՆԴՕՆ։ Եկաւ ռուսական նաւախումբը։ Թնդանօթների պարպումից յետոյ, ծովապետը եկաւ Պօրտսմուտ և պաշտօնական անձանց հետ այցելութիւններ փոխանակեց։

ԲԵՐԼԻՆ։ Երէկ պալատում տեղի ունեցաւ դեսպանների պատուին տրվող սովորական ճաշը։

ՎԻԷՆՆԱ։ Լօնդօնի աւստրո-ունգարական գեներալ-հիւպատոս Զարնֆէլդը նոյն պաշտօնով նշանակվեց Վարշավայում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

Էջմիածին, X-ին։ «Մշակը» իր ամբողջ գոյութեան ընթացքում անձնական համակրութեամբ կամ հակակրութեամբ չէ ղեկավարվել, ինչպէս վկայում էք և դուք, կամ «թայֆայական» չէ եղել, այլ առաջնորդվել է սկզբունքներով և փաստերով։ Մենք, ի հարկէ, կը տպենք ձեր հերքումները, և շատ ուրախ կը լինենք, եթէ նրանք կարողանան փարատել այն յուզմունքը, որ սկսել է տիրել հասարակութեան մէջ Էջմիածնի վերաբերմամբ։ Դուք շատ լաւ գիտէք, որ «Մշակի» այժմեան ղեկավարները չեն պատկանում այն մարդկանց, որոնք Էջմիածնի գոյութիւնը աւելորդ են համարում, այլ կամենում են միայն տեսնել այդ հիմնարկութիւնը իր կոչման բարձրութեան վրա։

Գանձակ, Ա. Զօլախեանցին։ Հաւատում ենք և ընդունում. շարունակեցէք գրել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Պուկիս, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. անկաբարձ., կանանց և երեխայոց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՊԷՏՔ ՉԷ
ՈՉ ՈՒՂՂԵԼ,
ՈՉ ՍՐԵԼ

Առողջապահիկ է և տնտես.։ Յար-նոր անվտանգ ածելիի սարք՝ «Ժիլետ», հետը ձրիաբար մէկ փոկ, 1 արկղ սապնի փոշի, 1 արկղ շպար, 1 սապնաման, 1 վրձին։ 6 առարկ.։ Ամբողջ սարքը լաւ և բոլորովին անվտանգ սափրվելու համար, միայն 1 ր. 85 կ., 2 հատը 3 ր. 50 կ.։ 1-4 առարկ. ճանապ. 40 կ. (Սիբիր 65 կ.)։ Ուղ. է վերադիր վճարով, առանց կանխավճ. Ед. Представ. Т-во «Альпага,» Варшава, 65.
(հ.) (В. 15294) 179. 1—1



ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՆԺԷԼՕ ԱՆԴՐԷՕԼԷՏՏԻԻ
Միխայլօվս. պր., սեփ., տուն,
№ 7

ԽԱՆՈՒԹ ԵՒ ՊԱՀԵՍՏ
Ամեն տեսակ արձանների, նոյնպէս և մարմարիօնից պատրաստված անդիների։
(հ. կ.) Գները չափաւոր են։ 185. 6—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յ. ՔԻՒՐՔՉԵԱՆԻ՝ աւերակների, վանքերի և արժէքաւոր հնութիւնների, ինչպէս և
ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ
յայտնի ստէրէօստիպ լուսանկարների
ՆԵԳԱՏԻՎՆԵՐ

Վանքերի, աւերակների ու հնութիւնների լուսանկարներ՝ 30×25 սանտ. մեծութ. 30 հատ նեգատիվ, 25×20 սանտ. մեծութ. 34 հատ նեգատիվ, 18×15 սանտ. մեծութ. 212 հատ նեգատիվ։
Անիի աւերակների ստէրէօստիպ լուսանկարներ՝ 20×12 սանտ. մեծութ. 165 հատ նեգատիվ։
Բոլոր նեգատիվները պահված են մեծ խնամքով և մինչև այժմս էլ ներկայացնում են աննման մի գործ այժմեան յայտնի լուսանկարիչների վկայութեամբ։ Պայմանների մասին դիմել՝ Эривань, Докторская ул., № 20, Карапету Татевосяну—յանձնելու տիկ. Թ. Քիւրքչեանին։ Նոյն տեղից կարելի է ստանալ և «Անիի աւերակներ» ստէրէօտիպ լուսանկարների յայտնի ժողովածուն։
(հ. կ.) 165. 5—3

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրախան. վաճառվում է
«ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ»
Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆԻ
Բովանդակութիւն.

Երկու խօսք, Ոսկի աքաղաղ Րաֆֆի, Խնամատար Շիրվանզադէի, Յովհ. Յովհաննիսեան, Ծովինար Ս. Քամալեանի, Էլի մէկ զոհ Գ. Սունդուկեանի, Ցեցեր Պ. Պռօշեանի Կորածներ Լէօի, Սիրտ, Թարգմ. Փ. Վարդանեանի, Այց Թիւրքաց Հայաստանին Լ. Սարգսեանի, Ա. Ահարոնեանի երկերը, Բառգիրք Արար. բարբառի Տ. Նաւասարդեանի, Համառ. Բիւզ. կայսր. պատմ., Կրակ Շիրվանզադէի, Յովհաննէս Թումանեան, Ռ. Պատկանեանի երկերը, Հայոց ազգը անցեալում, Դպրոցական տիպեր Լէհաւէթի։ Գինն է 1 ր. 25 կ., պօստի ծախքով 1 ր. 50կ.։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ Гуттенбергъ, Г. И. Галустяну.
186. 4—1

CONSTIPATION
PILULES DE
CASCARA
MIDY

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
Cascara Midy
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ
Ընդունելութեան չափը. 2 դեղահատ երեկոները, պառկելուց առաջ.
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեւոց և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գըլխաւոր դեղավաճառանոցներում։
(5, 15,25) (320257) 0—16

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՌԻԳԱՅՈՒՄ
ФАБРИЧ. КЛЕЙМО ПРОВОДНИКЪ РИГА
1888
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ Թիֆլիսում
Սօլօլակսկայա փող., № 4
ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝

Ռէզինի, կանեփի և ուրիշ թմնոցներ ամեն ինչի համար.
Ռէզինի տեխնիկական և էլեքտրօ-տեխնիկական առարկաներ և լուսանկարչական պիտոյքներ.
Իրեղէններ եղջերեայ րէզինից և էբօնիտից.
Առանձնացնող և կաբէլային պիտոյքներ.
Խիրուրգիական և բժշկական րէզինի իրեղէններ.
Ռէզինի խաղալիքներ և խաղագնդակներ.
Ռէզինի գալանտերէյնի ապրանքներ.
Ջնջող րէզին „Слонъ“ մարկայով.

ՀԱՏԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԼԱՒ
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ“
(№ 2) 25—10

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская 7.